№ 206 ՈՒՐԲԱԹ ՆՈՅԵՄԲԵՐԻ 5 1899 ՈՒՐԲԱԹ ՆՈՅԵՄԲԵՐԻ 5 № 206

ՔԱՍԱՆԵՕԹԵՐՈՐԴ ՏԱՐԻ

Տարեկան գինը 10 ռուբլի, կէս տարվան 6 ռուբ.
Առանձին համարները 5 կոպէկով.

Փիֆլիսում գրվում են միմիայն խմբագրատան մէջ.

Մեր հասցէն. Тифлисъ. Редакція „Мшакъ".
Կամ Tiflis. Rédaction „Mschak".
Տելէֆոն № 253.

ՄՇԱԿ

Խմբագրութիւնը բաց է առաւօտեան 10—2 ժամ
(բացի կիրակի և տօն օրերից)

Բայտարարութիւն ընդունվում է ամեն լեզուով.

Բայտարարութիւնների համար վճարում են
իւրաքանչիւր բառին 2 կոպէկ.
Տելէֆոն № 253.

ՀԻՄՆԱԴԻՐ ԳՐԻԳՈՐ ԱՐԾՐՈՒՆԻ

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹԻՒՆ

Եւրոպական ազդեցութիւն. — ՆԵՐՔԻՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ. Մամուլ. Դատաստանական դահլիճից. Նամակ Երևանից. Նամակ Խմբագրութեան. Ներքին լուրեր.—ԱՐՏԱՔԻՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ. Անգլո-տրանսվալեան պատերազմը. Արտաքին լուրեր.—ՀԵՌԱԳԻՐՆԵՐ.— ՑԱՑՏԱՐԱՐՈՒԹԻՒՆՆԵՐ. —ԲԱՆԱՍԻՐԱԿԱՆ. Պարսկաստանի քրդերը:

ԵՒՐՈՊԱԿԱՆ ԱԶԴԵՑՈՒԹԻՒՆ

—

Ֆրանսիական կառավարութիւնը որոշել է երկու միլիոն Ֆրանկ յատկացնել Սիրիայի Բէյրութ քաղաքի բժշկական դպրոցին և նրան տալ այնպիսի կազմակերպութիւն, որպիսին ունեն եւրոպական բժշկական ֆակուլտէտները: Անգլիական «Times» լրագրի ասելով, ներկայ նոյեմբեր ամսին Պարիզի բժշկական ֆակուլտէտի պրոֆէսորներից կազմված մի յանձնաժողով կայցելի Բէյրութ քաղաքը և տեղն ու տեղը կը մշակի բարենորոգութեան ամբողջ ծրագիրը: Բէյրութի դպրոցը գտնվում է տեղական կաթոլիկների հսկողութեան տակ և վայելում է Ֆրանսիական հիւպատոսի անմիջական պաշտպանութիւնը և հովանաւորութիւնը:

Այդպիսով Ֆրանսիան ձգտում է Սիրիայում շարունակել իր քաղաքակրթական դերը, որ նա ստանձնել է այս դարի առաջին շրջանում և պահպանել այն ազդեցութիւնը, որ նա ձեռք է բերել տեղական ազդաբնակութեան վրա իր ուժեղ պաշտպանութեամբ: Այդ ազդեցութիւնը ոյժ է տալիս անկասկած և քաղաքական այն դերին, որ կատարում է Ֆրանսիան Սիրիայում, ներկայանալով իբրև մի պետութիւն, որի հետ կապված են Միջերկրականի այդ ծովափի ժողովրդի կրթական և առևտրական յարաբերութիւնները: Ֆրանսիական ազդեցութիւնը, պէտք է խոստովանել, մինչև այժմ եղել է բարերար և արդիւնաւէտ, լինելով օգտաւէտ թէ տեղական ազդաբնակութեան և թէ Ֆրանսիայի համար:

Պէտք է նկատել, որ Բէյրութը, կազմելով Միջերկրական ծովի արևելեան ափի նշանաւոր կենտրոններից մէկը իր մօտ 100,000 բնակչով, յայտնի է իր կրթական և բարեգործական ուրիշ հաստատութիւններով և նոյն իսկ գիտնական հիմնարկութիւններով. այնտեղ, օրինակ, գոյութիւն ունեն որբանոցներ, հիւանդանոցներ, ստորին դպրոցներ, իէալական դպրոց, օդերևոյթաբանական գիտանոց և այլն: Այլ ևս չենք խօսում այդ քաղաքի առևտրական բազմաթիւ հաստատութիւնների և հիւպատոսարանների մասին:

Մենք առանձնապէս կանգ առինք Բէյրութի նման մի կենտրոնի վրա, որովհետև այդպիսի կենտրոններ շատ քիչ կան աշխարհի այդ մասում, որ մի ժամանակ ունեցել է հին կուլտուրա, որից ոչինչ չէ մնացել: Ուրախալի է, որ վայրենի ազգերով լիքը առաջաւոր Ասիան գտնէ իր ծայրերից սկսած ընկնում է կամաց-կամաց եւրոպական ազդեցութեան տակ և այդպիսով կարողութիւն է ստանում մրցելու ժամանակով այն երկիրների շարքը, որտեղ հաստատված է կանոնաւոր կուլտուրական կեանք: Մի կողմից եւրոպական պետութիւնների հիմնած կրթական և ուրիշ հասարակական հաստատութիւնները, միւս կողմից Ռուսաստանի հարևանութիւնը իր կանոնաւոր պետական կեանքով պէտք է ստիպեն, որ առաջաւոր Ասիան յետ կենայ իր բարբարոս և անկարգ դրութիւնից և կամայ ակամայ ընդունի նոր կենցաղավարութեան ձևեր:

ՆԵՐՔԻՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ

ՄԱՄՈՒԼ

—

Ուսանողների անապահով դրութեան հարցը ամեն տարի դրվում է հասարակութեան առջև: Մեր լրագիրը չատ է անցեալներում խօսել այդ մասին և մենք գոհութեամբ պիտի արձանագրենք, որ մեր հասարակութիւնը լսեց «Մշակի» ձայնը և իր նուէրներով կարողութիւն տուեց խմբագրութեան օգնութեան հասնել մեր ուսանողներից չատերին: Հասարակութեան ուշադրութիւնը այս անհրաժեշտ կարիքի վրա դարձնելու համար մենք, եթէ յիշում են մեր ընթերցողները, ստիպված էինք կուել այն անհեթեթ կարծիքի դէմ՝ թէ ուսանողութեան չը պէտք է օգնել, քանի որ ուսանողները ոչինչ չեն տալիս հասարակութեան: Մենք ասում էինք, որ եթէ ուսանողը չէ էլ կարողանում հրաշքներ գործել (ով է առհասարակ հրաշքներ ցոյց տալիս մեր ժամանակակից աշխարհում), բայց այն հանգամանքը, որ բարձրագոյն ուսման տէր ինտելիգենցիան հասարակութեան չատ և չատ հարկաւոր է, պիտի հարկադրէ մեզ ցանկալի ընթացքում որոշ դեր են խաղացել:

Ղադր-աղա-Դէբուքրին, որ թէ հասակով, թէ կարողութիւնով և թէ զինուորական զօրութիւնով ամենաառաջին տեղն է բռնում, նախկին ապստամբութիւնից առաջ մի պարտքատէր մարդ էր, գիւղերը գրաւ էին, մինչև անգամ իր սեփական ջրաղացներում ջրաղացպանի պաշտօն էլ է վարել, բայց Միանդուաբի և չրջակայքի կողոպուտից նրա որդիներն այնքան աւար ժողովեցին, որ այսօր Սօուչ-Բուլաղի ամենահարուստ մարդն է: Այս մարդու երկու որդիքն էլ Շէյխ-Իբադուլլահի թիկնապահներն էին և կեղեքել են ամբողջ Նահանգի ոչ-սիւննի ազդաբնակութիւնը այն ապստամբութեան ընթացքում: Մինչև անգամ ինքը Ղադր-աղան խորամանկութեամբ հաւատարիմ ծառայ ձևանալով, այն ժամանակվայ Սօուչ-Բուլաղի Նահանգապետին սխալեցնում, փախցնում է Միանդուաբ:

Շէյխ-Ալի-խանի մեծ եղբայր Խան-Բաբա-խանը նոյն ապստամբութեան ժամանակ Շէյխ-Իբադուլլահից խալաթ և հրովարտակ ստանալով, Սօուչ-Բուլաղի Նահանգապետ է նշանակվում և կառավարում է Քիւրդստանը: Պէտք է իմանալ, որ այս ընտանիքը եօթ հարիւր տարվայ պատմութիւն ունի Պարսկաստանում և քրդերի մեծ հմակրութիւնն ու յարգանքն է վայելում:

Բայց և այնպէս, թէ Ղադր-աղան իր առասպելական դանձերով և թէ Շէյխ-Ալի-խանը իր ահագին կալուածքներով և տոհմականութեամբ գլուխ են իջեցրել իւլէմական իշխանաւորի՝ Միրզա-Ֆէթահի առաջ, որը մի տասնեակ տարի առաջ չէր էլ յանդգնի այդ մեծաւորների ձեռքերին ջուր ածել: Միրզա-Ֆէթահն իր խորամանկութեամբ այնպէս է գրաւել ամբողջ քիւրդ ազդաբնակութեան սիրտը, այնպիսի սոսկում է սփռել քիւրդ վաճառականութեան հոգու խորքերը և այնպէս կաշկանդել է ամբոխին, որ ամեն տեղ, ամեն մի խուլ անկիւնում նրա անունը հրաշքներ է գործում:

Միրզա-Ֆէթահը թէև հարուստ մարդ չէ, առօրեայ ապրուստն անգամ օրէցօր ստանում է իր ժողովրդից, բայց նա կերակրում է ամբողջ քիւրդ հոգևորականութիւնը թէ Սօուչ-Բուլաղում և թէ գաւառներում: Նա տիրաբար հրամայում է Սօուչ-Բուլաղի բոլոր դաշներին, որ ստանան իրանց ապրուստը, բայց չը միջամտեն իր գործերին, ժողովրդի բողոքներին: Նրա աներկիւղութիւնը այն աստիճանի էր հասել, որ ոչ միայն Սօուչ-Բուլաղի Նահանգապետները պարտաւորված էին նրա կամքը կատարել ամեն մի գործում, այլ Ատրպատականի նախկին կառավարչապետ խստապահանջ Ամիր-Նիզամն էլ պարտաւորված էր խոնարհվել նրա առաջ և վարձատրութիւններով վերադարձնել Սօուչ-Բուլաղ:

Պէտք է իմանալ, որ ուժեղի, զօրաւորի իսկական թագաւորութիւնը Պարսկաստանումն է: Պարսկաստանում թոյլ լինելը ամեն բանից զզրկում է մարդուն: Զօրեղի առաջ անպայման բոլորն էլ խոնարհվում են: Այդ իսկ պատճառով Պարսկաստանում, իւրաքանչիւր քաղաքում ոչ թէ մի, այլ մի քանի տասնեակ, մի քանի հարիւր վարչութիւն կայ: Ամեն մի զօրեղ անձնաւորութիւն իր վարչութիւնն ունի: Պետական կառավարութեան ներկայացուցիչը եթէ զօրեղ մարդ է, սրանց մեծագոյն մասը իրան հպատակեցնում և ծծում է երկրի հիմը, իսկ եթէ թոյլ մարդ է, ընկճվում է սրանց իշխանութեան տակ: Այս երկրում ոչ միայն նահանգապետները, պետական այլ և այլ հիմնարկութեան հաստատութիւնները, կղերը, կալուածատէրերը ունեն իրանց յատուկ վարչութիւնները, այլ ամեն մի ուժեղ և ազդեցիկ մարդ ունի իր սեփական վարչութիւնը: Օրինակ, մի զօրեղ սեղանաւոր երբէք իր դատը չի յանձնի որ և է իշխանութեան. նա իր սեփական ծառայողների օգնութեամբ կը բռնադատէ իր պարտապանին անձնատուր լինել և հաշիւները մարել: Հակառակ դէպքում նա ամեն տեսակ միջոցների կը դիմէ և ահագին խայտառակութիւն կը բերէ հակառակորդի գլխին:

Միրզա-Ֆէթահ-Ղազին մի այնպիսի վարչութիւն է ստեղծել իր համար, որ նրանից սոսկում են բոլոր քիւրդերը, մինչև իսկ պարսկական նահանգապետները: Միրզա-Ֆէթահը իր դիրքը այն աստիճանի է հասցրել, որ թէ քիւրդ ազնուական-կալուածատէրերը և թէ վաճառականները իրանց զաւակներից մէկին, իրանց հա-

ԲԱՆԱՍԻՐԱԿԱՆ

ՊԱՐՍԿԱՍՏԱՆԻ ՔՐԴԵՐԸ

(Նամակ Պարսկաստանից)

II

Քիւրդ ցեղապետները թէև իրանց ընդհանուր ժողովում առաջնորդ և իրանց դատը ղեկավարող ընտրել են՝ Դէբուքրի Ղադր-աղային, Մէջիդ-խանի որդի Շէյխ-Ալի-խանին, մանգուրների ցեղապետների առաջնորդ Բայիզ-աղային և Էլ-Խանի Ահմէդ-խանին, բայց իսկապէս գործը ղեկավարում է Ղաղի-Միրզա-Ֆէթահը, որի հրամանին կուրօրէն հետևում են 1500-ից աւելի քիւրդ կալուածատէր աղայականներ և բէյզադաներ: Ամբողջ քիւրդ ազնուականութեան սիրտն ու հոգին ներկայումս կապված է Միրզա-Ֆէթահի հետ և ամենայն հպատակութեամբ հնազանդվում են նրա բոլոր հրամաններին: Այդ չորս առաջնորդներն էլ թէև պարսկական զինուորական աստիճանաւորներ են, յայտնի տիտղոսների և չքանչանների արժանացած, բայց երբէք չեն ծառայել պարսկական բանակներում, զինուորական կարգերից ոչ մի տեղեկութիւն չունեն: Սրանք մեծ ժողովրդականութիւն են վայելում, մանաւանդ որ նախկին „Շէյխ-Իբադուլլահի առաջնորդութեամբ կատարված ապստամբութեան ընթացքում որոշ դեր են խաղացել:

Ղադր-աղա-Դէբուքրին, որ թէ հասակով, թէ կարողութիւնով և թէ զինուորական զօրութիւնով ամենաառաջին տեղն է բռնում, նախկին ապստամբութիւնից առաջ մի պարտքատէր մարդ էր, գիւղերը գրաւ էին, մինչև անգամ իր սեփական ջրաղացներում ջրաղացպանի պաշտօն էլ է վարել, բայց Միանդուաբի և չրջակայքի կողոպուտից նրա որդիներն այնքան աւար ժողովեցին, որ այսօր Սօուչ-Բուլաղի ամենահարուստ մարդն է: Այս մարդու երկու որդիքն էլ Շէյխ-Իբադուլլահի թիկնապահներն էին և կեղեքել են ամբողջ Նահանգի ոչ-սիւննի ազդաբնակութիւնը այն ապստամբութեան ընթացքում: Մինչև անգամ ինքը Ղադր-աղան խորամանկութեամբ հաւատարիմ ծառայ ձևանալով, այն ժամանակվայ Սօուչ-Բուլաղի Նահանգապետին սխալեցնում, փախցնում է Միանդուաբ:

Շէյխ-Ալի-խանի մեծ եղբայր Խան-Բաբա-խանը նոյն ապստամբութեան ժամանակ Շէյխ-Իբադուլլահից խալաթ և հրովարտակ ստանալով, Սօուչ-Բուլաղի Նահանգապետ է նշանակվում և կառավարում է Քիւրդստանը: Պէտք է իմանալ, որ այս ընտանիքը եօթ հարիւր տարվայ պատմութիւն ունի Պարսկաստանում և քրդերի մեծ համակրութիւնն ու յարգանքն է վայելում:

Բայց և այնպէս, թէ Ղադր-աղան իր առասպելական դանձերով և թէ Շէյխ-Ալի-խանը իր ահագին կալուածքներով և տոհմականութեամբ

Նախագահողն է—Նախագահի օգնական Օ. Ա. Ֆէքսման, դատարանի անդամներ—Վ. Մ. Դոբրովոլսկի, և Ա. Ա. Կրասովսկի, պրոկուրորի օգնական Ն. Ա. Տարասիձէի մասնակցութեամբ:

Այդ պահանջի էութիւնը հետեւեալն է: Կովկասեան ուսումնարանական շրջանին յանձնարարված է, 1898 թւի մարտի 21-ի Բարձրագոյն հրամանի հիման վրա, իր վարչութեան տակ առնել հայ-լուսաւորչական դաւանութեան եկեղեցիներին և վանքերին կից ծխական դպրոցներին պատկանող կալուածները և գոյքերը: Վերոյիշեալ Բարձրագոյն հրամանը ի կատար ածելու ժամանակ կովկասեան ուսումնարանական վարչութեան պաշտօնատար անձինք, չը բաւականանալով բացառապէս հայ-լուսաւորչական եկեղեցական և վանքական դպրոցներին պատկանող գոյքը ընդունելով, պահանջեցին յանձնել իրանց և այն գոյքերը, որոնք բացառապէս, սեփականութեան իրաւունքի հիման վրա, պատկանում են հայ-լուսաւորչական եկեղեցիներին: Մի այդպիսի պահանջով պաշտօնապէս առաջին անգամ դիմեց Ախալցխայի հայ-լուսաւորչական հոգևոր վարչութեանը 1898 թւի օգոստոսին, № 823-ով, Թիֆլիսի նահանգի ժողովրդական դպրոցների տեսուչ Բօգդանով, յայտնելով, թէ ինքն ընդունում է Ախալցխա քաղաքի ս. Փրկիչ եկեղեցու 19 հազար դեսեատին հողերը ուսումնարանական վարչութեան իրաւասութեան և կարգադրութեան տակ: Վերոյիշեալ պաշտօնական գրութիւնը ուղարկելուց յետոյ Բօգդանով, այժմ վախճանված, տեղական վարչութեան ներկայացուցչի և վկաների ներկայութեամբ իր իրաւասութեան տակ առաւ քաղաքային գիւղեր և հողեր, 19 հազար դեսեատին տարածութեամբ: Իսկ ի նկատի ունենալով այն, որ խլած բոլոր գիւղերը և հողերը Ախալցխայի ս. Փրկիչ եկեղեցու բացառիկ սեփականութիւնն են կազմում և որ մինիստրների կոմիտէի 1898 թւի մարտի 26-ի Բարձրագոյն հաստատված կարծիքի ճիշդ մտքի համաձայն՝ ուսումնարանական վարչութեանը յանձնարարված է իր իրաւասութեան տակ առնել այն գոյքերը, որոնք սեփականութեան իրաւունքով պատկանում են հայ-լուսաւորչական ծխական դպրոցներին, որպէս իրաւաբանական անձանց, բայց ոչ թէ եկեղեցական կալուածքները, որոնց մասին ամենևին չէ յիշատակված վերոյիշեալ օրէնքի մէջ,—երդուեալ հաւատարմատար Մէլիք-Աղամեանց, ի հաստատութիւն այն բանի, որ Բօգդանովի ընդունած գիւղերը և հողերը բացառապէս եկեղեցուն են պատկանում և ոչ թէ դրպրոցին, ներկայացնելով կալուածագիրը 1841 թւի ապրիլի 18-ից, 1898 թւի մարտի 26-ի Բարձրագոյն հրամանի 2-դ կէտի համաձայն, խնդրում էր վճիռ կայացնել. ճանաչել Ախալցխայի ս. Փրկիչ եկեղեցու սեփականութեան իրաւունքը Կարզախ, Տատէշի, Խազանին, Կոբով, Սուլդա, Պուզալ և Օրլակա գիւղերի վրա նրանց պատկանող դեսերով, լճերով, անապատներով, լեռներով, խոտահարքերով, արօտատեղերով և բոլոր իրանց պատկանելի հողամասերով, կալուածագրում ցոյց տրված սահմաններում. Կովկասեան ուսումնարանական վարչութեան կարգադրութիւնը՝ վերոյիշեալ անշարժ կայքերը իր իրաւասութեան տակ առնելու վերաբերմամբ՝ ապօրէն և չեղած համարել, իսկ Բօգդանովի ընդունելութեան ակտը համարել ոչնչացրված և իր ոյժը կորցրած, դատաստանական ծախսերն առնելով 400 հազար բուբլի պահանջի գնից:

Այդ պահանջի դէմ կովկասեան ուսումնարանական շրջանի հոգաբարձուն, իր գրաւոր պատասխանի մէջ, ըստ էութեան չառարկելով ներկայացրված պահանջի դէմ, յայտնեց թէ ներկայ գործը նահանգական դատարանի իրաւասութեան ենթակայ չէ, ապացուցանելով, որ հայ-լուսաւորչական հոգևոր հիմնարկութիւնները ենթակայ են ներքին գործերի մինիստրութեան իրաւասութեանը, այդ պատճառով ներկայ դէպքում անշարժ կալուածքի վերաբերեալ վէճը կարող է լինել միայն ներքին գործերի մինիստրութեան և ժողովրդական լուսաւորութեան մինիստրութեան մէջ, այսինքն երկու արքունական վարչութիւնների մէջ, որպիսի վէճերի լուծման համար գոյութիւն ունի կատարելապէս ուրիշ կարգ, որ որոշված է քաղ. դատ. կանոնադրութեան 1297 յօդուածով, այդ պատճառով այդ պահանջը ոչ թէ դատաստանական հիմնարկութիւնների քննութեան է ենթակայ, այլ վարչական հիմնարկութիւնների:

Իր գրաւոր բացատրութեան մէջ կոնսիստորիայի լիազօր պ. Մէլիք-Աղամեանց, մանրամասն քննելով ուսումնարանական շրջանի հոգաբարձուի ներկայացրած առարկութեան օրինականութիւնը, մատնացոյց է անում, որ այն ընդհանուր կանոնից՝ թէ քաղաքացիական որպիսի վէճերը ենթակայ են դատաստանական հիմնարկութիւններին, դատաստանական կանոնադրութիւնները միայն մի բացառութիւն են անում, երբ վէճը ծագում է մինիստրութիւնների կամ գլխաւոր կառավարիչների մէջ (1297 յօդ. քաղաքացիական դատավարութեան կանոնադրութեան). բայց օրէնսդիրը դրա հետ միասին ուզէլի և հոգևոր վարչութիւնների և քաղաքային ու գիւղական հասարակութիւնների գործերի համար հաստատել է պաշտպանութեան ընդհանուր կարգ, քաղաքացիական գործերի վերաբերմամբ (յօդ. 1298 և 2 կ. 343 յօդ. քաղ. դատ. կանոնադրութեան). բացի այդ պարզ օրէնքից, օտար դաւանութիւնների կանոնադրութեան 13-դ յօդուածի և քաղ. դատավարութեան կանոնադրութեան 1298 յօդուածի համաձայն, հայ-լուսաւորչական հոգևոր վարչութիւնը չէ կարող մինիստրութիւնների կամ վարչութիւնների դատում դաւել, որոնց բացառապէս ի նկատի ունի ուսումնարանական շրջանի պ. հոգաբարձուի բերած քաղաքացիական դատավարութեան կանոնադրութեան 1297 յօդուածը: Պատասխանատու կողմի այն բացատրութիւնը, թէ հոգևոր վարչութեան անունով պէտք է հասկանալ միայն ուղղափառ դաւանութեան վարչութիւնը, և այդ պատճառով ներկայ դատարանը իրաւունք չունի ղեկավարվել քաղաքացիական դատավարութեան կանոնադրութեան 1297 յօդուածով, անպայման հերքվում է այդ յօդուածի բնագրով, որի մէջ ասված է՝ «գանգաղան դաւանութիւնների հոգևոր վարչութիւնների վէճերը»: Բացի բերած առարկութիւններից, պ. Մէլիք-Աղամեանց մատնացոյց է անում, որ այն հարցը՝ թէ այդպիսի պահանջները ենթակայ են դատաստանական և ոչ թէ վարչական հիմնարկութիւններին, լուծվում է 1898 թւի մարտի 26-ի Բարձրագոյն հրամանով, որի հիման վրա ապօրինի կերպով գրաւված է ս. Փրկիչ եկեղեցու կալուածքը: Այդ օրէնքի մէջ ասված է. «Եթէ քաղաքացիական վէճեր ծագեն մինիստրների կոմիտեի ներկայ կանոնադրութեան 1 յօդուածում յիշված կայքերի սեփականութեան մասին (այսինքն այն կայքերի, որոնց գրաւել է ուսումնարանական իշխանութիւնը) և այդ վէճերը յարուցանողը լինեն մասնաւոր մարդիկ, հայ-լուսաւորչական եկեղեցու ներկայացուցիչները կամ հիմնարկութիւնները, այն ժամանակ դրանց իրաւունք էր տրվում այդ վէճերը լուծելու համար դիմել ընդհանուր-դատաստանական կարգին»: Պարզ է, որ ընդհանուր դատաստանական հիմնարկութիւն ասելով չէ կարելի հասկանալ վարչական կարգը, որ ցոյց է տուած քաղաքացիական դատավարութեան կանոնադրութեան 1297 յօդուածի մէջ:

Դատարանում երկու կողմերը հաստատեցին իրանց գրաւոր բացատրութիւնները: Պրոկուրորի օգնականը իր եզրակացութեան մէջ ենթադրում էր, որ պատասխանատու կողմի (ուսումնարանական վարչութեան) առարկութիւնը պէտք է անհետևանք թողնել:

Դատարանը վճռեց առանց հետևանքի թողնել այն առարկութիւնը, որ ներկայացրել է Կովկասի ուսումնարանական շրջանի հոգաբարձուն այն մասին, թէ ներկայ գործը ենթակայ չէ նահանգական դատարանի իրաւասութեան:

Այս գործը ըստ էութեան կը քննվի այն ժամանակ, երբ պատասխանատու կողմը ժամանակին բողոք չի ներկայացնի դատաստանական պալատին կամ երբ բողոք ներկայացնելուց յետոյ պալատն էլ նոյն որոշումը կը կայացնէ:

«Тифл. Листокъ»

ՆԱՄԱԿ ԵՐԻՒԱՆԻՑ

Հոկտեմբերի 25-ին

Երկաթուղու գլխաւոր կայարանի խնդիրը կրկին հրապարակ է եկել և շատ զբաղեցնում է մեր հասարակութեանը: Ինչպէս յայտնի է, գլխաւոր կայարանը որոշված է կառուցանել Երևանից մօտ 15 վերստ հեռաւորութեան վրա, չը նայած դոր դրած ջանքերին: Բայց այժմ այլ հանգամանք է առաջ եկել և նորից ջանքեր են լինում գլուխ բերել Երևանի համար անագին նշանակութիւն ունեցող այդ հարցը: Այդ հանգամանքը հետևեալն է:

Այստեղ լուր է տարածված, որ Ալէքսանդրոպոլի դէմ մի քանի թերութիւնների պատճառով փոփոխութիւններ են կատարվել վարչութեան կազմի մէջ և ենթադրվում է, որ թերևս փոփոխութիւն լինի նաև երկաթուղու գծի անցնող տեղերի մէջ, մանաւանդ որ այժմեան գլխաւոր կայարանի որոշված տեղը ճահճային է և հետևապէս անյարմարութիւններ ներկայացնող: Անհայտպիսի հանգամանքներ նորից ափիթ են եղել զբաղեցնելու երևանցիների մտքերը: Այժմ հարցը այնպէս է դրված, որ մեր ճանաչողները շատ թոյլ վերաբերվեցին անցեալում և ձեռքից բաց թողեցին մի այնպիսի կարևոր հարց, որպիսին է գլխաւոր կայարանի լինել չը լինելու հարցը: և երբ այժմ արդէն մեր հասարակութիւնը քաւում է իր յանցանքը, միւս կողմից մեծ ջանքեր է գործ դնում իր սխալն ուղղել և ինչպէս էլ որ լինի միջնորդել, թէկուզ պատգամաւորութիւն ուղարկել Պետերբուրգ այդ խնդրի առիթով: Հարցը ահա այս կերպ է դրված և քաղաքային խորհրդի ամսիս 26-ի հերթական նիստում: Տեսնենք հետևանքը ինչ է լինելու:

Չը լինի Երևանում գլխաւոր կայարանը, մեր քաղաքը կորած է. մանաւանդ այժմ առանձին նշանակութիւն է ստանում այդ գիծը չնորհիւ այն խճուղու, որ կառուցվելու է Զուլֆայի և Թաւրիզի մէջ: Այս քանի օրը այստեղի վրայով դէպի պարսից սահմանը անցաւ ինժենէրների մի խումբ, իր հետ տանելով մարդիկ և անհրաժեշտ պարագաներ ռուսաց սահմանից մինչև Թաւրիզ խճուղի անցկացնելու համար: Ղազվինից Թէհրան խճուղի անցկացնելուց յետոյ ռուսաց կառավարութիւնը իր ուշադրութիւնը դարձրել է Թաւրիզի վրա, որը չնորհիւ Զուլֆա հանող երկաթուղու, դառնալու է Ռուսաստանի համար առևտրական մի մեծ կենտրոն. ճիշդ է, մինչև այժմ էլ ռուսաց ապրանքները մուտ գործում էին այդ կողմերը, բայց այդ բոլորը այն չափով, ինչ չափով կարելի էր ծանրաքայլ ուղտի կարաւաններով, իսկ երկաթուղի և խճուղի կառուցանելուց յետոյ դրութիւնը փոխվում է. և հիւսիսային Պարսկաստանի ամբողջ առևտուրը դառնալու է մեր կողմը:

Ա—Դօ

ՆԱՄԱԿ ԽՄԲԱԳՐՈՒԹԵԱՆ

Ալէքսանդրոպոլ, հոկտեմբերի 26-ին

«Մշակի» թղթակից Պ. Մ. հոկտեմբերի 17-ի իր նամակում («Մշակ», № 191) վերագրելով ինձ անչափ զեղծումներ իմ երէցփոխական հաշիւների նկատմամբ՝ հասարակութեան առաջ ցոյց է տալիս, թէ իմ երէցփոխական հաշիւները կեղծ ու սարքովի են և թէ եկեղեցական գումարներից պակասում է: Նախ քան պ. թղթակցին դատարանում տեսնելը՝ պարտք եմ համարում յայտնել յարգելի ընթերցողներին իմ մի քանի բացատրութիւնները:

Պ. թղթակիցը իմ հաշիւների տպագրած հրատարակելը աչքակապութիւն և նորից վերընտրվելու միջոց է համարում և հարց է տալիս. «ինչ կարիք կար հաշիւ տպագրել հէնց այն րոպէին՝ երբ մի-երկու օրից յետոյ պէտք է տրպագրվէր (?) և տարածվէր հաշուետեսների «քրքրած», «զտած» և «ուղղած» հաշիւները»: Նախ և առաջ, պ. Մ., հասարակութեան հաշիւները պարտաւորական է. պէտք է որ հասարակութիւնից ընտրված պաշտօնեան հաշիւ տայ իր գործունէութեան մասին այն հասարակութեան՝ որից ինքն է ընտրվել: Մթթէ աչքակապութիւն է, երբ փոխանակ մի-երկու անհատի՝ ամբողջ հասարակութեան առաջ են դրվում իմ հաշիւները, միջոց է տրվում նրան հետաքրքրվելու, համեմատելու նախկին երէցփոխինների հաշիւների հետ և վերջապէս իմանալու, թէ իրանց նուիրած կոպէկները ծառայել են արդեօք իրանց նպատակին թէ ոչ: Այս մէկ: Երկրորդ յարմարութիւնը մեր հաշիւների տպագրութեան այն հրեշաւոր սայօգ լուրերն էին, որոնք առաջացել էին պ. պ. հաշուետեսների սխալմունքից և որոնց տարածման համար դուք երկու ձեռքով աշխատում էք: Մի հարց ևս, պ. Մ., իմ հաշիւների տպագրութիւնը, որ դուք չուտ էք համարում, արդեօք աւելի չուտ չէր ձեր թղթակցութեան լոյս տեսնելը. չէիք կարող մի քանի օր ևս համբերել՝ մինչև որ պ. պ. հաշուետեսները իրանց վերջնական եզրակացութիւնը պաշտօնապէս կը յայտնէին և դուք միջոց կունենայիք հանձնաժողով նշանակելու և ըստ այնմ կազմելու ձեր թղթակցութիւնը:

Մանուչէհր-Միրզա նահանգապետից անիրաւ փալախակայի ժամանած Ռասուլ-աղան ևս, Բափիր-աղայի խորհրդով, մոռանում է կերած տանջանքի ցաւը և գալիս մտնում է հօրեղբօր որդու՝ Բափիր-աղայի խմբակները և միանում է Աղա-Մահմադ-Մամաչին: Շահզադա Մանուչէհր-Միրզան ոչ միայն ներողութիւն է խնդրում Ռասուլ-աղայից իր անիրաւ վարմունքի համար, այլ մի ընտիր խալաթ է նուիրում և կառավարութիւնից չքանչան ու աստիճան է պահանջում այդպիսի հաւատարիմ ծառայի համար:

Հաջի-Միւշիր-Լաշկէրը, որ ուղարկված էր գահաժառանգի կողմից քիւրդ աղայականների հետ բանակցելու և նրանց խաղաղեցնելու, երկիւղից Միանդուաբից այն կողմը չէր կարողացել անցնել: Միանդուաբից սա մի քանի անգամ պատգամաւորներ է ուղարկում, որ քիւրդ աղայականները իր մօտ գան բանակցելու, կամ Սօուչ-Բուլաղ գնան, իրանց բողոքները յայտնելու և խնդիրը խաղաղութեամբ կարգաւորելու, բայց քիւրդերի առաջնորդները միաձայն մերժում են ամեն մի առաջարկ և պահանջում են նախ հեռացնել Սօուչ-Բուլաղից Մանուչէհր-Միրզա-Շահզադին: Հաջի-Միւշիրի Լաշկէրը տասն օր Միանդուաբ սպասելուց յետոյ, հազիւ սիրտ է անում գնալ Թուրիջան, քրդերի առաջնորդների մօտ:

(Կը շարունակվի)

ցով և հագուստով, իրանց ձիով և զէնքով դրել են Միրզա-Ֆէթահի դուռը ծառայելու և նրա հրամանները իրագործելու: Եօթ-ութ հարիւր առոյգ պատանիներ և երիտասարդներ այդ իլէմի դրանը ծառայում են և նրա ակնթարթին են սպասում, որ հրամանները իրագործեն: Եւ ով կարող է մի այդպիսի զօրեղ զօրի հրամանների դէմ գնալ, կամ ընդդիմանալ:

Հէնց որ Մանուչէհր-Միրզա-Շահզադան ուզեց զսպել իր նահանգի այս անզուսպ իլէմին, սա բորբոքվեց և սկսեց հնարներ արուել, որ տապալէ հակառակորդին և Միրզա-Ֆէթահի նման ենթամիտ հոգևորականի համար դժուար չէր նպատակին հասնել:

Մանուչէհր-Միրզա-Շահզադան ինչ-ինչ բողոքների առիթով պաշտօնականներ է ուղարկում, որ գնան մազուրների ցեղապետ Բայիզ-աղայի եղբօր՝ Սուար-աղայի որդուն՝ Ռասուլ-աղային կանչեն իր մօտ Սօուչ-Բուլաղ: Միրզա-Ֆէթահը կանչում է իր մօտ այդ պատգամաւոր պաշտօնեաներին և հրամայում է, որ գնան և մի քանի օրից վերադառնալով, պատմեն թէ Ռասուլ-աղան իրանց անպատուեց, ծեծել տուեց, հայհոյեց նահանգապետին էլ, Շահին էլ և դաղաբի բոլոր տոմմիկներին: Պաշտօնեաները մի քանի օր զբաղում են, հիւր են մնում Քիւրդստանում, վերադառնում և Միրզա-Ֆէթահի տվածքածի համաձայն, ասում են Մանուչէհր-Միրզա նահանգապետին, թէ Ռասուլ-աղան ըմբոստացած ապարդել է և վիրաւորել բոլորին:

Սրա վրա սաստիկ բորբոքվում է Մանուչէհր Միրզան և իսկոյն եօթանասուն ձիաւոր է ուղարկում, որ գնան և կապած, կաշկանդած բերեն Ռասուլ աղային: Այդպէս էլ կատարում են և Ռասուլ աղային նահանգապետի ապարանքը հասցնելու պէս, վերջինիս հրամանով, առանց քննութեան, պատկեցնում են փալախկայի տակ և սկսում են թակել: Այս անարգանքից սաստիկ վիրաւորվում է մազուրների ցեղապետների առաջնորդը՝ Բայիզ աղան, դիմում է Միրզա Ֆէթահին և սրա հետ բոլոր քրդական կալուածատէր ազնուականութեան, որից առաջացան այս խռովութիւնները և շարժումները, ինչպէս նախորդ նամակով գրած եմ:

Քրդերի նման ուազակաբարոյ և ժշտապէս յափշտակութեամբ, ասորառութեամբ և կեղեքումներով պարապող ժողովրդի համար անհրաժեշտ է այս երկրում զօրեղ լինել, ազդեցիկ լինել և շրջակայ ցեղակիցներից միշտ նախապատուած լինել թէ կղերի և թէ կառավարութեան դռներում: Քրդերը մեծ նախանձով և անասելի զոհաբերութեամբ միշտ կուի, մրցման մէջ են և ամբողջ ցեղեր իրանց առաջնորդներով, ցեղապետներով, յայտնապէս թէ գոռալով՝ միշտ զինված են իրար դէմ: Մամաչիները, նկատելով, որ մազուրների ցեղապետ՝ Բայիզ աղայի նախաձեռնութեամբ սկսված այս դատի, այս կռիւի ամբողջ փառքը ժողովուրդը պիտի յատկացնէ ժանգուրներին, նրանց ատաղ պիտի բարձրանայ, գուցէ և առաջնութիւն ձեռք բերեն ամբողջ Քիւրդիստանի էլաթների մէջ, ոչ միայն ձեռնպահ մնացին քրդական միութեան դէմ, այլ նրանց առաջնորդը՝ Մահմադ աղան, ինչպէս գրած էի նախորդ նամակով, իր ձիաւորներով անցաւ պարսից կողմը և գնաց պատրաստականութիւն յայտնեց իր ցեղակից ձիաւորներով իր ազգայիններ դէմ:

Աղա-Մահմադ-Մամաչի՝ վալիութից ստացած սիրալիր հեռագրից հրապուրված, նրա փեսան Բափիր աղան, որ մազուրների ցեղապետների առաջնորդի՝ Բայիզ-աղայի եղբօր որդին է, բաժանվում է իր ժողովրդով և ձիաւորներով հօրեղբօրից և միանալով աներոջը, նրա նման մի պատրաստականութեան հեռագիր է տալիս գահաժառանգին: Ցայտնի բան է, սրան ևս գրկաբաց ընդունում են: Բափիր-աղան Շէյխ-Իբադուլլահի ժամանակ մազուրներին առաջնորդող Հաւզա-աղայի որդին է, որի հօրը նախկին Ատրպատականի կառավարչապետ Ամիրի-Նիզամը նենգութեամբ իր վրանը հրաւիրեց խաղաղութիւնից յետոյ և սպանել տուեց: Հաւզա-աղայի մահից յետոյ, պարսկական վարչութեան կարգադրութեամբ, նրա որդին՝ Բափիր-աղան ցեղապետներին առաջնորդելու իրաւունքից զրկված էր, այնպէս որ այժմ աշխատում է այս պարագայից օգտվել, հօրեղբօրը տապալել և կրկին ձեռք բերել հայրական գերիշխանութիւնը:

Պ. Թղթակիցը առանձին ներողամտութեամբ է անցնում հաշիւներիս մի արք զեղծումների վրայից (չնորհակալութիւն բարեսրտութեան համար) և կանգ է առնում մուրքի 17-րդ դլխի վրա, ուր յիշված է—«տնտեսված մոմ 95 ռուբլի», և հրաւիրում է ընթերցողների ուշադրութիւնը, տնուանելով այդ՝ իբ և ուրիշների տարած մոմերի գողութիւն: Պ. Թղթակիցը, որ միայն եկեղեցու դրսի պատերին է ծանօթ, չը գիտէ ինչ է նշանակում եկեղեցի, ժողովուրդ և եկեղեցու արդիւնք: Տնտեսած մոմերը ոչ այլ ինչ են, եթէ ոչ պակների և ննջեցեալների համար առնված և ուխտաւորների բերած մոմերից աւելացածները, որ սովորաբար հաւաքվում է լուսարարների մոմ. ինչպէս ամեն տեղ՝ նոյնպէս և մեզանում դրանց մի մասը գործ է դրվում եկեղեցու լուսաւորութեան համար. աւելին (եթէ աւելանում է) ծախվում է նորից յօգուտ նոյն եկեղեցու, այսինքն մոմը, որ արդիւնք էր եկեղեցու՝ դառնում է փող, դարձեալ յօգուտ նոյն եկեղեցու: Երևի, պ. Մ., տնտեսել և գողանալ ձեզ համար միևնոյն բաներն են:

Ինչպէս ասացինք՝ տնտեսված մոմերից գոյացել էր 95 ռուբլի միայն իմ երկցփոխութեան երկրորդ տարվանից սկսած, (առաջին տարին ես լուսարարներից մոմ չեմ ստացել, կարող են վկայել իրանք) մինչև ներկայ թուի օգոստոսի 22-ը. այդ օրվանից լուսարարները դադարեցին ինձ մոմ տալուց՝ քահանաների մի-երկուսի հրամանով, որի համար և ես բողոքեցի կօնսիստորիան. կօնսիստորիան պատուիրեց տեղիս յաջորդ Մխիթար վարդապետին՝ ինձ բաւարարութիւն տալ, որից յետոյ սկսեցին մոմը յանձնել ինձ: Այդ դեռ բաւական չէ. պ. Թղթակիցը կասկած է յայտնում, որ այդ 95 ռուբլու հաշիւն էլ չէր լինի՝ եթէ մի բարեախտ հանգամանք լոյս աշխարհ չը հանէր այն անպիտան տետրակը: Այստեղ արդէն ամօթը կորցրած, Թղթակիցը այնպիսի տոն է տալիս իր գրչին, որ իբր թէ այդ տետրակը գողացված հաղարների հաշիւներ է երևան հանել, որի համար ես շտապել եմ հաշուէտեսներից յետ ստանալ իմ հաշուէտետանները և մուրքի մէջ մտցնել 95 ռուբլի մոմի արդիւնքը:

Ահա իրողութիւնը. նախ և առաջ այն «անպիտան տետրակը» իմ հաշիւների հետ ոչ մի առնչութիւն չունի. դա լուսարար սարկաւագի ծոցատետրն է, որտեղ ի շարս իր անձնական հաշիւների, գրել է նաև մոմ 14 ռուբլու մոմի հաշիւ. երկրորդ՝ այդ տետրակը ոչ թէ նոր է լոյս ընկել, այլ մոմ մի տարի առաջ՝ և երրորդ՝ ես մատեանները յետ եմ ստացել և ոչ թէ 95 ռ. հաշիւ եմ մտցրել, այլ 1500 ռուբլու հաշիւ: Ահա թէ ինչպէս: Հաշուեմատեաններում դեռ երկու ամսի հաշիւ չը գրած, քաղաքից իմ բացակայեղած ժամանակ (Ախալքալաք էի), հաշուետեսները եղբօրիցս վերցնում են մատեանները այն պայմանով, որ իմ վերադարձիս յանձնեն ինձ լրացնելու և ապա վերստին իրանց յանձնելու: Այդպէս էլ եղաւ. վերադարձիս անմիջապէս յետ պահանջեցի մատեանները և երկու ամսի հաշիւը (կրպակների 8 ամսի քրէչները և այլն), որ է 1500 ռ. իրանց փաստաթղթերով լրացրի մատեանում և կրկին յանձնեցի հաշուէտեսներին: Ուրեմն այն «անպիտան տետրակը» չէր պատճառը, որ մատեանները ես յետ վերցրի, քանի որ մի տարի առաջ էլ գոյութիւն է ունեցել: Եւ վերջապէս, ես ինչպէս կարող էի մուրք չը գրել այն՝ որի դադարման մասին ես իշխանութեան բողոքել եմ:

Այնուհետև պ. Թղթակիցը որոնում է իր և իր ընկերների ձեռքով Զատկի և Ծննդեան հանգանակված փողերը՝ որ իսպառ կորած է համարում: Նախ և առաջ պարոնը սուտ է խօսում. նա ոչ թէ իր ընկերների հետ փող է հանգանակել, այլ եկեղեցու դռանը մոմ է վաճառել, որին կարող է վկայել իր ընկեր Զ. Այվազեան, և երկրորդ՝ այդ փողերը իբրև մոմի արդիւնք՝ միւս երկու տարիների հետ միասին, որ եղել է 439 ռ. 15 կոպէկ, մտցրած է մոմի ընդհանուր արդիւնքի № 2-ի մէջ, որ է՝ 10205 ռուբլի 83 կոպէկ: Ահա թէ որտեղ են, պ. Մ., ձեր որոնած փողերը:

Գալով այն հարցին, թէ ես ստում եմ և առանց հոգևոր իշխանութեան կարգադրութեան եմ ինձ մոմ պահել եկեղեցական փողերը՝ դարձեալ նոյն պատասխանն եմ տալու, ինչ որ նախորդ նամակումս, այն է՝ այդ եղել է հոգևոր իշխանութեան կարգադրութեամբ. թէ ինչու, այդ արդէն ինձ իրաւունք չեմ համարում բացատրել: Դիմեցէք այդ իշխանութեան: Թող ընթերցողը դատէ ինձ և պ. Թղթակցին:

Երէցփոխ Աւետիս Տիգրանեանց

ՆԵՐՔԻՆ ԼՈՒՐԵՐ

—

Ինչպէս յայտնի է, մինչև այժմ սահմանագծերի մոտ գտնվող մաքսային շրջանների գլխաւորները հսկում էին և սահմանապահ զինուորների վրա: Նոր օրէնսդրութեամբ այդ հսկողութիւնը բոլորովին վերցվել է մաքսային վարչութիւնից և սահմանապահ զօրքի համար կազմված են յատուկ շրջաններ իրանց գլխաւորներով:

—

Շատ համակրելի է Թիֆլիսի դումայի վերջին նիստի որոշումը, որով Թիֆլիսում բացվում է հոգեկան հիւանդների համար մի յատուկ հիւանդանոց: Հիւանդների ամենամեծ մասը պէտք է ընդունվի աղքատ դասակարգից և միայն մի տասներորդ մասը աւելի ունևոր դասից: Այդ հիւանդանոցը կարողութիւն կը տայ պատսպարել փողոցներում թափառող հոգեկան հիւանդներին, որոնք յաճախ մնալով առանց խնամքի և հսկողութեան, վարում են ամենասոսկալի կեանք և երբեմն պատճառ դառնում ուրիշների դժբաղդութեան:

—

Պետերբուրգի աշխարհագրական ընկերութեան մէջ յայտնի ճանապարհորդ Ա. Կրասնով կարդաց մի զեկուցում Սև ծովի արևելեան ափում գտնվող Սոչի քաղաքի բնական հարստութիւնների մասին: Զեկուցանողը Սոչիի կլիման համեմատում է հարաւ-արևմտեան Ֆրանսիայի, այն է Պիրենէյի կլիմայի հետ: Նա ասում է, որ Սոչիում միջին տաքութիւնը հասնում է 4°, ինչպէս և Տուլուզում, այն ինչ աշունքը և ամառը լինում են հաճելատաքար աւելի տաք, քան Տուլուզում: Հազիւ թէ Կովկասում լինի մի ուրիշ անկիւն, ինչպէս Սոչին, որտեղ բնակվելիս լինեն միատեղ այնքան ազգեր, ինչպէս օրինակ, հայեր, պարսիկներ, յոյներ, չերքեզներ, վրացիք, մինգրելներ, գերմանացիներ, մոլոքաններ և ուրիշներ: Ամենաօգտաւէտ տարրը, կուլտուրական տեսակէտից, ներկայացնում են ռուսները և գերմանացիք: Պ. Կրասնով ասում է, որ եթէ այդտեղ չեն աջողվում տնկարանները, դրա պատճառը պէտք է վերագրել ոչ թէ հողի անբերրիութեան, այլ տեղի կլիմայական պայմանների հետ անծանօթութեան:

—

Ինչպէս յայտնի է, մինչև այժմ Մուշտաիդ այգու միջով դէպի Դիդուբէ կոչված քաղաքամասը թոյլատրված էր երթևեկութիւնը կառքերով միմիայն ցերեկով: Այժմ, ինչպէս լսում ենք, երկրագործական մինիստրութեան կովկասեան լիազօրը թոյլատրել երթևեկութիւնը նաև գիշերով:

—

ԱԼԷՔՍԱՆԴՐՕՊՕԼԻՑ մեզ գրում են հետևեալը. «Ամերիկա գաղթած դուխօբոր կոչված աղանդաւոր ռուսների տեղը արևմտեան Շիրակ եկած են բնակութիւն հաստատելու համար 400 տուն ռուս գաղթականներ: Դրանք Վլադիմիրի նահանգի հողազուրկ գիւղացիներն են, որ բնակվելիս են եղել Կուբանի շրջանում, Լաբինսկայա ստանիցայում: 30 տուն յետ դարձան կրկին Կուբանի շրջանը, չուզեցան Շիրակում բնակվել, իսկ 370 տունը բնակութիւն հաստատեցին արևմտեան Շիրակում, հինգ գիւղերի մէջ: Կառավարութիւնը ամեն կերպ օգնում է գաղթականներին. արդէն ամենքի համար տունը շինված պատրաստ է կառավարութեան հրամանով, այնպէս որ ոչինչ նեղութիւն չեն կրում նորեկ գաղթականները:»

—

ՍՂՆԱԽԻՑ մեզ հաղորդում են հետևեալը. «Սղնախցի Գէորգ Մամուլեան, որն առևտուր է անում Բօստովում Դոնի վրա, այս օրերս տեսնելով Նուկրիանի արուարձանի ս. Սարգիս եկեղեցու անչուք դրութիւնը, նուիրել է 600 ռ. եկեղեցին ներկելու համար:»

—

ԱԼԷՔՍԱՆԴՐՕՊՕԼԻՑ մեզ հաղորդում են. «Քաղաքիս մէջ բարեգործութեան նշաններ են երևում. Միքայէլեան կոչված փողոցը սկսել են սալայատակել, այնպէս որ գոնէ մեծ փողոցներով կարելի կը լինի ցեխ ժամանակ ման գալ: Արդէն մեր քաղաքի ցեխը իրօք որ անտանելի է: Օդը քաղաքումս շատ ցուրտ է: Կենսական պիտոյքները առատ են. շատ թանգ է վառելիքը: Փայտը չը տեսնված գին ունի: Երկաթուղու պատճառով սալապան գիւղացիները Թիֆլիս չեն գնում ապրանք, բեռ բերելու: Երկաթուղին նոյնպէս չէ բերում, այդպիսով ապրանք ստանալու համար հարկաւոր է ամիսներ սպասել: Երանի թէ կառավարութիւնը շուտով կարգադրէր, որ երկաթուղու վարչութիւնը ապրանք տեղափոխէ Թիֆլիսից դէպի Կարս և Ալէքսանդրօպոլ, այլապէս մեր ժողովուրդը շատ նեղութիւն պէտք է քաշէ թէ կենսական մթերքի և թէ վառելիքի կողմից:»

—

ԴԱՐԱՉԻՉԱԳԻՑ մեզ հաղորդում են. «Մի քանի ժամանակ առաջ լսեցինք, որ մեզանում տարբերական դպրոց է բացվում. շատ ուրախացանք այդ մասին, որովհետև յոյս ունէինք, որ մեր երեխաները, որոնք օրն ի բուն թափառում են փողոցներում և հայհոյանքներ սովորում՝ կը կարդան ուսումնարանում և ապագայում մարդ կը դառնան: Բայց մինչև այժմ այդ լուրը մնում է լուր»:

ԱՐՏԱՔԻՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ

ԱՆԳԼՕ-ՏՐԱՆՍՎԱԱԼԵԱՆ ՊԱՏԵՐԱԶՄԸ

—

Անգլիական լրագիրների մէջ տպված են մի քանի մանրամասնութիւններ Կոլէնզօից դէպի Իստկօրտ յետ քաշվելու մասին: «Daily News» լրագրի յատուկ թղթակիցը գրում է, որ գնդապետ Կուպէր հեռացաւ Կոլէնզօից, նախ՝ այն պատճառով, որ թշնամու ոյժերը շատ և շատ էին անգլիական ոյժերից, բացի դրանից բօէրներին օգնութեան էր եկել Օրանժեան հանրապետութեան բօէրների մի զօրաբաժին, այնպէս որ բօէրների ընդհանուր թիւը հասաւ 5000-ի: Երկրորդ՝ Կուպէրի յետ նահանջելու շարժառիթներից մէկն էլ բօէրների հեռաձիգ թնդանօթներն էին, որոնց պատճառով չէր կարելի դիրքը պաշտպանել: Իստկօրտ գտնվում է Կոլէնզօից 27 մղոն հեռաւորութեան վրա: Քաղաքի վրա է նայում Դէօրնֆօրդ մարտկոցը:

Լէյտէնանտ էջէրտօն «Powerful» կրէյսերից, որ Լէդի-Սմիթում վիրաւորվեց ռումբի մի կտորից, այս օրերս մեռաւ, երբ կտրեցին նրա երկու ոտքերը: Հանգուցեալը ծովակալ էջէրտօնի որդին էր և Դէվոնշիրեան դքսը քրոջ որդին: «Daily News» լրագիրը նրա մահվան առիթով մատնացոյց է անում, թէ պատերազմին մասնակցում են անգլիական բարձր ազնուականութեան շատ ներկայացուցիչներ: Օրինակ, Մեֆկինգ է ուղարկված առաջին մինիստրի որդիներից մէկը, լորդ Էդվարդ Սեսիլ: Զինուորական մինիստր լորդ Լէնսդաուն երկու որդիք ունի Բալլերի զօրաբաժնում, իսկ Հնդկաստանի զօրքերի մինիստր լորդ Համիլտոն և նրա կինը 11 եղբօրորդիք և քրոջորդիք ունեն Կապլանդիայի ծառայութեան մէջ: Դիմադրական կուսակցութեան կողմից կան լորդ Տվիդմաուտ և լորդ Ռիբլստալ:

Լօնդոնի մամուլը միաձայն խոստովանում է, որ Լօնդոնում ստացված տեղեկութիւնները անբաւարար են և թէ դրանցից որևէ գաղափար չէ կարելի կազմել գեներալ Ուայտի ներկայ դրութեան մասին: Այդ պատճառով լրագիրները մեծ գոհունակութեամբ խօսում են անգլիական զօրքի սրի տրամադրութեան մասին Լէդի-Սմիթում և յոյս են յայտնում, որ նրանք կը դիմանան մինչև Դուրբան ապասվող օգնական զօրքերի գալը:

Անգլիական լրագիրները ի միջի այլոց ծիծաղում են Լէդի-Սմիթի անձնատուր լինելու մասին տարածված լուրերի և այն բանի վրա, թէ Ուայտ վիրաւորված է: Լօնդոնում հաստատում են, որ այդ լուրը բղխում է Պարիզի տրանսվաալեան գործակալութիւնից, իսկ այնտեղից էլ տարածվել է Ամստերդամում, Բերլինում և Բրիւսէլում: Բայց տրանսվաալեան գործակալութեան մէջ կտրականապէս հերքում են այդ:

«Kreuz-Zeitung» լրագրի Կ. Գօլսի թղթակիցը հաղորդում է, թէ անգլիական մի գնդապետ, որը երբեմն ծառայել է հարաւային Աֆրիկայում, պատմել է իրան հետևեալ հետաքրքիր մանրամասնութիւնները բօէրների պատերազմ վարելու ձևի մասին: «Իրանց սովորութեամբ,—նկատեց այդ գնդապետը,—մեր գեներալները, ըստ երևոյթին, պակասեցրել են թշնամու ոյժը: Անկասկած, բօէրների զօրքը ընդհանրապէս բաղկացած է կարգապահութեան անսովոր և տգէտ գիւղացիներից, բայց նրանց մէջ սերունդից սերունդ ժառանգաբար անցել է ժողովրդական կռիւ վարելու արուեստը: Երբ բօէրները նեղվում են զօրեղ թշնամու յարձակումից, նրանք առանց որևէ մէկի հրամանի անսալու, շուռ են գալիս և փախչում են: Դա կարող է երբեմն անմիտ փախուստ կարծվել, բայց իսկապէս նրանք բաց չեն թողնում թշնամուն և իսկոյն և եթէ յարձակումն են գործում, հէնց որ հակառակորդը անզգուշութեամբ հետամուտ է լինում նրանց աւելի թոյլ ոյժով: Բօէրներին ուժասպառ է անում միայն թնդանօթային սաստիկ կրակը, բայց այդ դէպքումն ևս նրանք աշխատում են այդ կրակից հեռանալ և աւելի յարմար կէտ գտնել յարձակման համար: Բօէրները պատերազմելու ժամանակ կանգնում են կիսալուսնի ձևով և աշխատում են, որ թշնամին յարձակում գործէ կենտրօնի վրա: Երբ այդ աջողվում է կռիւ յետ քաշվելու միջոցով, այն ժամանակ երկու թևերը, որոնք մինչև այդ ժամանակ ծածկված են լինում, յարձակվում են թշնամու զօրքի վրա և միևնոյն ժամանակ կենտրօնն էլ սկսում է յարձակողական դիրք բռնել: Բօէրներին հեռու տարածութեան վրա հետամուտ լինելը նոյնքան վտանգաւոր է, որքան վիրաւորված վագրի յետևից վազելը առանց հրացանի:

ԱՐՏԱՔԻՆ ԼՈՒՐԵՐ

—

—«Berliner Tageblatt» լրագիրը ասում է, որ Լօնդոնում մեծ անհամբերութեամբ են սպասում Պօտսդամի տեսակցութեան հետևանքներին: Որպէս զի Վիլհելմ կայսրի հասակրանքը թեքեն յօգուտ Անգլիայի՝ վճռված է նրան ընդունել սովորականից դուրս չքեղութեամբ: Այդ առիթով Պօրտսմուտ կուղարկվեն «Frafalger», «Howe» և «Sansparel» զրահակիր նաւերը ու «Australia» զրօսանաւը, որոնք պէտք է ուղեկցեն կայսերական նաւը: Պօրտսմուտ կը գնան Կոնստանտեան և Իօրկի դքսերը. Ուելսի դուքսը կը դիմաւորի կայսրին Վինդզօրի կայարանում:

—Արտասահմանի լրագիրները հաղորդում են, որ Ամստերդամում տեղի է ունեցել մի բազմամարդ ժողով, որն որոշում է կայացրել դիմել անգլիական թագուհուն մի խնդրագրով՝ վերջ տալ պատերազմին: Այդ ժողովում ստորագրութիւն են բացել յօգուտ բօէրների, որ տուել է 235,364 ֆլորին:

«ՄՇԱԿԻ» ՀԵՌԱԳԻՐՆԵՐ

ՌՈՒՍԱՑ ԳՈՐԾԱԿԱԼՈՒԹԻՒՆԻՑ

3 նոյեմբերի

ՊՐԷՏՕՐԻԱ: «Ռէյտէրի գործակալութիւն»: Լէդի-Սմիթից, նոյեմբերի 9-ից, ստացված տեղեկութիւնների հաստատմամբ, լուսաբացին սկսվեց սաստիկ թնդանօթաձգութիւն: Բօէրների մի քանի զօրաբաժիններ մօտեցան անգլիական ամրութիւններին մինչև 1500 ոտքերդ. այդ ժամանակ թնդանօթաձգութիւնը դադարեց և սկսվեց հրացանաձգութիւն: Մէֆկինգի և Կիմբէրլէյի մոտ ամեն բան հանգիստ է:

Կ. ՊՕԼԻՍ. «Corresp. Bureau»: Միջերկրական ծովի ֆրանսիական նաւատորմի կառավարիչ Ֆուրնիէ՝ երէկ իր շտաբով փառաւոր մուտք գործեց Երուսաղէմ: Ֆուրնիէ այցելութիւն է տարել նոյնպէս սուլթանին: Ֆրանսիական պատանաւը կը գնայ ծովակալին բերելու Պիրէյ, սրովհետև Բ. Դուռը թոյլ չը չը տուեց ֆրանսիական մեծ զրահակիր նաւին Դարդանելեան նեղուցով անցնելու, որի համար ֆրանսիացիք խնդրել էին:

Երէկ Դամասկոսում տեղի ունեցաւ յոյն-ուղղափառ Անտիոքի պատրիարք Մելիտիի հանդիսաւոր պատակալութիւնը: Այդպիսով պատրիարքական հարցը վերջնականապէս վճռվեց:

ՊԱՐԻԶ: «Հաւասի գործակալութիւն»: Ծովապետ Կուրժոլ հեռագրում է Կվան-Չժօուվանից, որ Մենասէ զինուորական պահակի երկու օֆիցէրներ անզգուշութիւն ունեցան գնալ առանց պահապանների միւս կողմը, որտեղ նրանց սպաննեցին չինացիները: Այն ժամանակ Կուրժոլ հրամայեց ձերբակալել Թայանի պրէֆեկտին և զինուորական նաւը: Ֆրանսիական դեսպանը հրաման է ստացել պահանջել Ցունգ-լի-եամէնից, որ նա պատժի ենթարկէ յանցաւորներին և պատասխանատու իշխանութեան:

ԼՕՆԴՕՆ: «Ռէյտէրի գործակալութիւն»: «Times» լրագրին հեռագրում են Տօկիօից, նոյեմբերի 2-ից, որ Ռուսաստանի և Եապոնիայի յարաբերութիւնների լարված լինելու մասին լուրերը ճիշդ չեն, որովհետև վերջին ժամանակներս երկու կառավարութիւնների մէջ գոյութիւն չունի ոչ մի հարց, որ միջազգային բնաւորութիւն ունենայ:

4 նոյեմբերի

ՊԵՏԵՐԲՈՒՐԳ: Թագաւոր Կայսրը, Թագուհի Կայսրուհի Ալէքսանդրա Ֆէօդորօվնա Օգոստափառ Երեխաներով և Մեծ Իշխաններ Նիկոլայ Նիկոլաեվիչ և Միխայիլ Նիկոլաեվիչ բարեհաճեցին Սկերնէվիցից ճանապարհ ընկնել դէպի Ցարսկօե-Սելօ:

ԼՕՆԴՕՆ: Համբուրգեան «Patria» պօստային շոգենաւի վրա, որ գնում էր Նիւ-Յորկից, նոյեմբերի 3-ին, Հիւսիսային ծովում, Դուվրի մոտ, հրդեհ սկսվեց, որ չէր կարելի հանգցնել այդ պատճառով, որ շոգենաւը բեռնաւորված էր իւղով: Կապիտանը հրամայեց բոլոր ճանապարհորդներին փոխադրել նաւակները: Բոլոր 150 ճանապարհորդները փոխադրվեցին մակոյկները, իսկ յետոյ նրանց վերջրոց ռուսաց «Ցերբերա» շոգենաւը և ափ իջեցրեց Դուվր:

ՏՈՒԼԻ, հոկտեմբերի 22-ին: «Ռէյտէրի գործակալութիւն»: Կապիտան Գլիին հաղորդում է, որ բօէրների բանակում մեծ կենդանութիւն է տիրում: Հեռագրատն թելը հոկտեմբերի 21-ին կտրեցին: Խուզարկու զօրաբաժինը լսեց հեռուից սաստիկ թնդանօթաձգութիւն և վերադարձաւ գնդապետ Սէրկլիի: Բանակը կէսօրին սաստիկ ռմբակոծութեան ենթարկվեց արշաւող թշնամու կողմից: Բոլոր ձիաները և ջորիները փախան, բայց ոչ ոք չէ վիրաւորված: Բօէրների ոյժերը բաղկացած են 400 մարդուց: Մէկ ուրիշ զօրաբաժին շրջապատված էր բօէրներով, բայց

կատաղի կռուից յետոյ վերադարձաւ Տուլի։ Մէկ օֆիցէր և հինգ մարդիկ պակասում են։

ԲՈՒԼՈՒՎԱԾՕ, 22 հոկտեմբերի։ «Ռէյտերի գրծակալութիւն»։ Պոդպատապատ գնացքը հասաւ մինչև Մօխուդիէ և դուռ այնտեղ կամուրջը փնտրած։ Բազմոնների ոստիկանութեան տեղեկատուները հաղորդում են, որ բօէրների զօրաբաժինը կողոպտում և կտրում էր հեռագրական թելերը, իսկ յետոյ գնաց Սեկվանի՝ աւարը տանելու համար սայլեր բերելու։

ՊԱՐԻԶ։ Ֆրանսիական երկու օֆիցէրների սպանութիւնը Կվան-Զիօս-Վանում բացառիկ փաստ է համարվում։ Մովապետ Կուրժոլ տիրեց հարևան գիւղերին։

ՊԱՐԻԶ։ Բարձրագոյն դատարան։ Դէրէֆուսի փաստաբանը պատժում է իր կլիէնտի եղրակացութիւնները։ Դատարանը վճռի կայացնելը յետաձգում է։ Մի ուրիշ փաստաբան պահանջում է հեռացնել դատաւորի պաշտօնից Ֆրանկմասօնութեան պատկանող սենատորներին։ Այդ պահանջը մերժվեց։ Նիստը յետաձգված է վաղվան։

ԼԻՍԱԲՕՆ։ Բժշկապետ Պեստանա վախճանվեց ժանտախտից։

ՄԱԴՐԻԴ։ Բարսելոնայից ստացված վերջին տեղեկութիւնների համեմատ, դրութիւնը աւելի ևս վատացաւ, որովհետև ազգաբնակութիւնը հրաժարվեց հարկեր տալուց, յուսալով դրանով կառավարութեան անկումն առաջ բերել։ Մագազինները նորից փակվեցին։

ԿԻԵՎ։ Գաղտնի խորհրդական Տէրէշչենկօ 150,000 բուբլի ուղարկեց քաղաքագլխին քաղաքային տարրական դպրոցի շինութիւն կառուցանելու 300 տղաների և աղջիկների համար, նոյնպէս մանկավարժական թանգարան կառուցանելու համար։ Նուիրատուն ցանկանում է, որ յատուկ ուշադրութիւն դարձնվի տղաների գծագրութեան, նկարչութեան, վայելչագրութեան և ձեռքի աշխատանքի և աղջիկների ձեռագործի վրա, նոյնպէս մարմնամարզութեան և երգեցողութեան վրա։

Խմբագիր՝ ԱԼԵՔՍԱՆԴՐ ՔԱԼԱՆԹԱՐ
Հրատարակիչներ՝ ԹԱԴՈՒՀԻ ՏԻԳՐԱՆԵԱՆ
ԻՍԱՀԱԿ ՄԵԼԻՔ-ԱՂԱՄԱԼԵԱՆ

ՅԱՅՏԱՐԱՐՈՒԹԻՒՆՆԵՐ

Լոյս տեսան
Մ. ՉՄՇԿԵԱՆՑԻ
1900 Թ. ՕՐԱՑՈՅՑՆԵՐԸ
Ցանկացողները թող չտապան՝ որպէս զի ժամանակին կարողանանք հայցնել։ Հասցէն՝ Թիֆլիս, Մակար Ջմշկեան։ (ե. շ.) 5—20

ԿԱՐԱ-ՄՈՒՐԶԱՆ
տալիս է ընտանիքներում մասնաւոր դասեր հայկական ազգային և ժողովրդական երգերի.
Разъѣзжая № 9. д. Поповой, близъ памятника Воронцову. 5—5

Պետերբուրգի բժշկական վարչութեան թոյլտուութեամբ։ Մեծ արկղիկը 5 բուբլի, փոքրը—3 բ. և 1 բ. 50 կ։

ՏԻՖԼԻՍԻՆ
ՆՈՐ ՄԻՋՈՑ
մազերը բուսցնելու և ամրացնելու համար, ոչնչացնում է թեփը։ Դուրս է եկել նաև բոլորովին նոր միջոց
ԶՈՒԻ ԿԱԹԸ
երեսին քնքշութիւն և սպիտակութիւն տալու համար, ոչնչացնում է արևի պատճառած սևութիւնը, մունները, տալիս է կաշուին քնքշութիւն և սպիտակութիւն։ Այդ գները չափաւոր են. մեծ սրուակը, արկղիկի մէջ, 2 բուբլի, փոքրը—1 բ. 50 կ. Ծախվում են բոլոր պարֆիւմերական և դեղավաճառական խանութներում։ Գլխաւոր պահեստը գտնվում է Պետերբուրգում, Գուշկինսկայա փողոց տ. № 15, բնակարան № 12. պահեստի բաժանմունքները գտնվում են. Թիֆլիսում կովկասեան դեղատան ապրանքների վաճառման ընկերութեան խանութում՝ Երևանեան հրապարակ և նրա բաժանմունքում, Միքայէլեան փողոց և Բաղում. նաև Միքայելեան կամուրջի վրա, Գապովի և Արիստակովի դեղատներում։ Օտարաքաղաքացիների պատուէրները կատարվում են անմիջապէս՝ պօստով։ 19—100

ՆԵՐՍԻՍԵԱՆ ՀԱՅՈՑ ՀՈԲԵԻՈՐ ԴՊՐՈՑԻ հոգաբարձական խորհրդում՝ նոյեմբերի 24-ին, 1899 ամի, երեկոյեան ժամի 8-ին կը լինի աճրդախօսութիւն, կապալով տալու չորս տարի ժամանակով, 1900 թ-ի յունվարի 1-ից, Սաղումը, քաղաքիս VIII մ, եղած հանգուցեալ Օքոյեանցի նուիրած կալուածքը (այժմ պանդոկ), որից ստացվում է տարեկան 905 բուբլի։ Պայմանները կարելի է կարդալ հոգաբարձական դիւանատանը ամեն օր, բացի կիրակի և տօն օրերից—ցերեկվայ ժամի 10—2-ը։
(5, 7) 1—2

Նոյեմբերի 24-ին 1899 ամի, երեկոյեան 8 ժամին ՆԵՐՍԻՍԵԱՆ ՀԱՅՈՑ ՀՈԳԵՒՈՐ ԴՊՐՈՑԻ հոգաբարձական խորհրդում կը լինի աճրդախօսութիւն կապալով տալու 4 տարի ժամանակով։ 1900 թ. յունվարի 1-ին դպրոցի հին շինութեան ներքնայարկի կրպակները, նկուղներով, Այդ կալուածքը գտնվում է քաղաքիս Ш-րդ մասի ռուսաց բազարում, որից այժմ ստացվում է կապալադրամ տարեկան 9000 բուբլի։ Պայմանաթուղթը կարելի է տեսնել հոգաբարձական դիւանատան մէջ, ամեն օր, բացի կիրակի և տօն օրերից ցերեկվայ 10—2 ժամը։
(5, 7) 1—2

ՄԵՐՎՈՒՄ, Անդրկասպեան նահանգում, ընտանեկան հանգամանքներից ստիպված, **ԾԱԽՎՈՒՄ Է ԴԵՂԱՏՈՒՆ** յատուկ բաժանմունքով, դեղավաճառանոցի խանութով և տնով, 26,000 բուբլիով, որոնցից 10,000 բուբլի կանխիկ, իսկ 16,000 բ. մաս մաս վճարումներով, հաշուելով 6%։ Տարեկան եկամուտն է՝ 9,399 դեղատոմսերից մօտ 16,000 բուբլի
Հասցէն. Мервъ, Аптекарю. 7—10

ԲԱԳՈՒ—ՍԵՒ ՔԱՂԱՔ
Մարդարեանի գործարանում բացված է ԿԵՐՈՍԻՆԻ, ԳԱԶՕԼԻՆԻ, ՍՕԼԵԱՐԻ ԻՒՂԻ և այլ ՆԱՒԹԱՑԻՆ ՄՆԱՑՈՐԴՆԵՐԻ
ՊԱՀԵՍՏ
Ցանկացողներին կարելի է տալ և վագոններով։ Դիմել՝ Черный городокъ, Михаилу Канджунцову, заводъ Маркарова.
(ե. հ. չ.) 8—10

ՆԵՐՍԻՍԵԱՆ ՀԱՅՈՑ ՀՈԳԵՒՈՐ ԴՊՐՈՑԻ ՀՈԳԱԲԱՐՁԱԿԱՆ ԽՈՐՀՐԴԱՐԱՆՈՒՄ նոյեմբերի 17-ին 1899 ամի, երեկոյեան 8 ժամին լինելու է աճրդախօսութիւն կապալով տալու դպրոցապատկան 18 կրպակները, եօթը նկուղներով. այդ կալուածքը գտնվում է քաղաքիս 3-րդ մասում, Ռուսաց բազարում, որից այժմ ստացվում է տարեկան 3100 բ. եկամուտ։ 2—2

ՆԵՐՍԻՍԵԱՆ ՀԱՅՈՑ ՀՈԳԵՒՈՐ ԴՊՐՈՑԻ ՀՈԳԱԲԱՐՁԱԿԱՆ ԽՈՐՀՐԴԱՐԱՆՈՒՄ նոյեմբեր ամսի 17-ին, երեկոյեան 8 ժամին, լինելու է աճուրդ (առանց կրկնաճրդի) կապալով տալու դպրոցապատկան այգին Սօղանլուխում։ Պայմանաթուղթը կարելի է կարդալ հոգաբարձական դիւանատան մէջ ամեն օր, բացի կիրակի և տօն օրերից, ցերեկվայ 10—3 ժամը։
2—2

Լոյս տեսան
ԿԱՐԱՊԵՏ ԱՓԻՆԵԱՆԻ
1900 Թ.
ԾՈՑԻ և ՊԱՏԻ (Շիրակ)
Օրացոյցները։
ԾՈՑԻ ՕՐԱՑՈՑՑԸ զարդարված է մի քանի հայ գործիչների պատկերներով. ունի նոր յաւելուած, ընդարձակ բժշկարան, հարուստ երաշխան և նոր զուարճալի վիճակարան։

—

ՊԱՏԻ ՕՐԱՑՈՑՑԻ մէջ կան բարոյական խրատներ, նոր ծիծաղաշարժ առակներ՝ Մօլլա-Նասր-Էդդինից, Դալի-Քէշիշից, Պլլբպուղուց, այլև ժողովրդական առածներ, գիւղական լէլէներ, ընտիր բանաստեղծութիւններ, ժողովրդական երգեր, հայոց և եկեղեցական պատմութիւնից հատուածներ, զուարճալի պատմութիւններ, բժշկական, տնտեսական, արհեստագիտական և այլ օգտակար ու հետաքրքիր տեղեկութիւններ։

Գները { Մոցինը —20 կոպէկ / Պատինը—50 կոպէկ

Գումարով գնողներին լինում է զիջում։
Դիմել՝ Александрополь, Карапету Апинянъ կամ Alexandrople, Karapet Apinian (Caucase).
3—20

Третій Годъ. **ОТКРЫТА ПОДПИСКА НА 1900 ГОДЪ** Третій Годъ.
(третій годъ изданія)
на еженедѣльную литературно-политическую и научно-популярную газету, посвященную Кавказу, Сибири, Туркестану, Востоку, еврейству и инородцамъ подъ названіемъ

„РОССІЯ и АЗІЯ“.

(Пидписной годъ съ 1 Ноября 1899 г. по 1 Ноября 1900 г.)

Газета будетъ выходить еженедѣльно въ форматѣ газетнаго листа, при чемъ мѣсто ея фельетона займетъ „Научно-литературный отдѣлъ“, гдѣ будутъ помѣщаться повѣсти, разсказы, стихотворенія, драматическія произведенія, изслѣдованія и пр., посвященныя предмету газеты. Въ каждомъ номерѣ затѣмъ будетъ помѣщена передовая статья по предмѣту содержанія изданія и цѣлый рядъ чисто газетныхъ свѣдѣній, между которыми видное мѣсто займетъ рядъ статей о самоуправленіи городовъ на Кавказѣ, о кавказскихъ разбояхъ и пр. Приложеніе къ изданію составитъ.

Альманахъ „Россіи и Азіи“

состоящій изъ 10 книжекъ въ составъ которыхъ войдутъ:

1) „полное собраніе сочиненій Армянскаго романиста Церенцъ (Шишманьянъ) въ 3 частяхъ, въ русскомъ переводѣ съ историческимъ комментаріемъ.
2) ОКРАИНА. Календарь Россіи и Азіи съ массою беллетристическаго матерьяла.
3) Путеводитель по Кавказу приватъ-доцента Грена, составленный на основаніи личныхъ пятнадцатилѣтныхъ изслѣдованій редактора.
4) Введеніе въ изученіе Кавказскихъ языковъ. Грузинская грамматика прив. доц. Грена съ христоматіей и словаремъ.
5) Введеніе къ изученію Библіи и Талмуда. Еврейская историческая грамматика со словаремъ и комментаріемъ и три особыхъ сборника, а именно:
1) КАМЧАТКА. Сборникъ статей по географіи, этнографіи и лингвистикѣ Камчатскаго полуострова.
2) ІУДЕЯ. Сборникъ статей по исторіи, литературѣ и этнографіи Еврейскаго народа.
3) КАВКАЗСКАЯ СТАРИНА. Сборникъ статей по исторіи, литературѣ и этнографіи Кавказа.

Подписная цѣна на газету въ годъ безъ доставки 5 руб., съ доставкою и пересылкою 6 руб., на полгода 3 руб., съ доставкою и пересылкою 4 руб., заграницу 7 руб. и 5 руб. Допускается разсрочка по 3 руб. въ два срока и по 2 руб. въ три, но въ такомъ случаѣ приложенія посылаются по уплатѣ всей годовой платы.

Адресъ редакціи Кіевъ, Несторовская, д. 26 к. 10.

1—3 Редакторъ-издатель прив. доц. А. Н. ГРЕНЪ.

Բժշկարար Կէֆիր եւ Կումիս
Օ. ԿՕՐՕՆԱ
Թոյլատրված Թիֆլիսի բժշկական բաժանմունքից և ստուգված երկու էքսպերտների՝ երկու ցուցահանդէսներում, ընտիր կէֆիր և կումիս պատրաստելու համար։ Կարելի է ստանալ Օ. Կօրօնայի գործարանում, Լօրիս-Մէլիքեան փողոց, տուն Զուբալովի և բաժանմունքում, Միքայէլեան փողոց, օֆիցէրների տնտեսական ընկերութեան խանութին կից։
Ուսուցիչներին, սաներին և տնտեսական ընկ, անդամներին կը լինի զիջում։ Զիջում կունենան և այն չքաւորները, որոնք կը ներկայացնեն բժշկից առանձին դեղատոմս։
Ցանկացողներին՝ կէֆիր ու կումիս կարելի է տուն ուղարկել։ 17—50

ԲԱԳՈՒՈՒՄ
Բացված է ներկայ ուսումնական տարվայ սկզբից
ՈՒՍՈՒՄՆԱՐԱՆ ԵՒ ՊԱՆՍԻՕՆ
ՅԱԿՈՎԲ Յ. ԹԱԴԷՈՍԵԱՆՑԻ
(Ներսիսեան դպրոցի նախկին հոգաբարձուի)
Ընկերակցութեամբ ուսուցիչ պ. ԱՍՏՈՒԱԾԱՏՈՒՐ ԳԱԼՍՏԵԱՆԻ
(քարտուղարի Բագուի հայոց Մարդասիրական ընկերութեան)
Աշակերտներ ընդունվում են երթևեկ, կիսագիշերօթիկ և գիշերօթիկ՝ 7 տարեկան հասակից։ Դպրոցի նպատակն է պատրաստել երեխաներին կլասիկական գիմնազիա և բէալական դպրոց մտնելու համար։ Ուսումը սկսված է սեպտեմբերի 6-ից։
Պայմաններն իմանալու համար դիմել ուսումնարան՝—Տէլէֆոնայա և Ստանիսլավսկայա փողոցների անկիւն, տուն Եղիազարովի։ 9—10

ԸՆԿԵՐՈՒԹԻՒՆ
ԲՐՕԿԱՐ ԵՒ ԿՕՄՊ.
ԾԱՂԿԱՅԻՆ Օ-ԴԷ-ԿՕԼՕՆԻ
ՀՆԱՐՈՂՆԵՐ
ԳՈՐԾ Է ԱԾՎՈՒՄ որպէս օծանելիք, տուալէտային ջուր և օդը մաքրելու համար. (ա 5) 5—10
M. 87646.

„ՎԻԷՆՆԱՅԻ ՎԱՃԱՌԱՏՈՒՆ“
ԱՂԷՔ. ԽՈՒԴԱՎԵՐԴԵԱՆԻ
Գօլովինսկի Պրոսպէկտի վրա, առաջին գիմնազիայի հանդէպ, տուն Քաշուէթի սուրբ Գէորգ եկեղեցու։
Ստացել ենք մեծ քանակութեամբ աշնանային և ձմերային սեզոնի համար՝
Տղամարդկանց եւ Երեխաների պատրաստի հագուստներ։
Ստացված է նոյնպէս **ՖՈՐՄԷՆՆԻՑ ԶԳԵՍՏՆԵՐ**.— դատաստանական, ուսուցչական և աշակերտական—կլասիկական և բէալական ուսումնարաններին։
Ունենալով մեծ քանակութեամբ մատերիաներ, ընդունում ենք նաև ամեն տեսակ պատուէրներ։ Գները ՎԵՐԶՆԱԿԱՆ ԵՆ և անհամեմատ էժան։
Վերադիր վճարով պահանջողները պէտք է ուղարկեն պատուէրի 1/3 մասը։ 20—40

Дозволено цензурою Тифлисъ, 4 Ноября 1899 г. Типографія Грузинск. Т.-ва Большая Ванкская ул., № 27.